ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Սովորողների արժեքային համակարգի ձևավորումը մայրենիի դասավանդման ընթացքում

Հետազոտող ուսուցիչ՝ Նաիրա Հարությունյան

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ 6

ԳԼՈՒԽ 1. ՈՒՍՈՒՑԻՉԸ՝ ՈՐՊԵՍ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԻՄՆԱՔԱՐ ԵՎ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՂ 10

ԳԼՈՒԽ 2. ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ 12

ԳԼՈՒԽ 3. «ՍԱՄՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ՝ ԴՊՐՈՑՈՒՄ՝ ՈՐՊԵՍ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑ 16

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 21

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթությունը գիտելիքներիքանակը չէ, այլ լիակատար ըմբռնումնու հմուտ կիրառումն այն ամենի, ինչ գիտես:

Ա. Դիստերվեգ

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես՝ անգնահատելի է լեզվի և գրականության դերը՝ առանց նույնիսկ էականորեն տարբաժանելու մայրենի և օտար լեզուների նշանակությունը սույն խնդրի առնչությամբ:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:

Ամեն դարաշրջան իր խնդիրներն ու պահանջներն է թելադրում դպրոցին: Կրթական նոր քաղաքականությամբ կարևորվում է ուսուցչի դերը՝ որպես բովանդակության մշակողի, որպես նորարարի: Կրթակարգը ուսուցչի գործունեության ուղեկիցն է լինելու: Մեծանում է ուսուցչի պատասխանատվությունը: Նա իր մեթոդական պատրաստականությունն ու գիտելիքները հարստացնելու խնդիր ունի: Նա պետք է ապահովի պետության ակնկալիքները հանրակրթությունից: Սերունդները հաջորդում են սերունդներին և փոխվում են նրանց հետաքրքրությունների շրջանակը, նրանց պահանջները, կրթության մասին

վերաբերմունքը, փոխվում են իրենք, փոխվում է արժեքային համակարգը: Եվ ուսուցիչները տեղեկատվության հոսքի աճին զուգընթաց սկսում են նոր տեղեկությունները նորովի ուսուցանելը, կյանքում կիրառելի գիտելիքներով ու կարողություններով օժտված անհատ ձևավորելը: Սա է պատճառը, որ ուսուցիչն իր աշխատանքին զուգահեռ պարբերաբար վերապատրաստվելու, մասնագիտական նորություններին և դասավանդման նոր մեթոդներին ու ռազմավարություններին ծանոթանալու հնարավորության կարիք ունի :

Թեմայի արդիականությունը

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները:

Հետազոտության **նպատակը**՝ բացահայտել առարկայի դասավանդման ընթացքում սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման գործընթացի էությունը, ձևավորման վրա ազդող գործոններն ու միջոցները:

Հետազոտության խնդիրները՝

1. ուսումնասիրել թեմային վերաբերող գիտաուսումնական գրականությունը,
2. վերլուծել դասապրոցեսը ,
3. սահմանել արժեքային համակարգի ձևավորման ուղիները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորմանն անդրադառնալիս նպատակային ենք համարում նախ խոսել մանկավարժական մշակույթի, դրա ձևավորման և կիրառման մասին՝ գտնելով, որ ուսուցիչը նախ ինքը պետք է լինի այդ արժեքային համակարգի կրողը։

Մանկավարժական մշակույթի խնդրի հետազոտության սկիզբը կարելի է համարել 20–րդ դարի 70–80–ական թվականները, երբ մանկավարժական մշակույթը սկսեց դիտարկվել որպես մշակույթի դրսևորում և հասարակության հոգևոր գործունեության որոշակի արտահայտություն: Ընդհանուր մշակույթը և մասնագիտական մշակույթը դիտարկվում են փոխադարձ կապի մեջ և փոխպայմանավորված են միմյանցով: Ուսուցչի մանկավարժական մշակույթը ձևավորվում և զարգանում է ընդհանուր մշակույթի հիման վրա և ունի իմացական–ճանաչողական, տեղեկատվական, հաղորդակցական գործառույթներ: Կրթության անձնակողմնորոշիչ հայեցակարգի ձևավորման արդյունքում սկսեցին ուսումնասիրվել մանկավարժական մշակույթի առանձին կողմեր՝ բարոյաէթիկական, հաղորդակցական: Ներկայումս «մանկավարժական մշակույթ» հասկացությունը ներառում է և՛ հոգեբանամանկավարժական գիտելիքները, և՛ մանկավարժի էթիկան, տակտը, մանկավարժական տեխնիկան, խոսքի մշակույթը, մեթոդական վարպետությունը, անձնային հատկանիշները: Այս մոտեցումը մեծ մասամբ պայմանավորված է նրանով, որ «մանկավարժ» հասկացությունը բովանդակում է մասնագիտությունը, սոցիալական դերը, գործունեության ձևը, անձի ուղղվածությունը: Մանկավարժական մշակույթը ուսուցման և դաստիարակության գործընթացում դրսևորվում է որպես ամբողջական համալիր՝ ներառելով ոչ միայն ընդհանուր գծեր, այլև յուրաքանչյուր դասավանդողի անձնային հատկանիշները: Մանկավարժական մշակույթի տիրապետման գործընթացը բազմաշերտ և երկարատև գործընթաց է, որը պահանջում է անընդհատ ինքնակատարելագործում, ինքնակրթություն և ինքնազարգացում: Մանկավարժական մշակույթը մանկավարժական գործընթացի պայմաններում ընդհանուր մշակույթի յուրահատուկ դրսևորում է: Վ. Ա. Բարաբանշչիկովը մանկավարժական մշակույթի հիմնական բաղադրատարրեր է դիտարկում հոգեբանամանկավարժական գիտելիքների

իմացությունը, բարոյական անբասիր կերտվածքի, մտավոր և հուզական հատկանիշների ներդաշնակ զուգակցումը, գիտական, մանկավարժական, հետազոտական ունակությունների համատեղումը, մեթոդամասնագիտական հմտությունները, անընդհատ ինքնակատարելագործումն ու պահանջկոտությունը իր գիտելիքների նկատմամբ[1]: Մի շարք հետազոտողներ, ելնելով այսօրվա իրականությունից, որում առկա են կրթության մարդասիրացման կայուն միտումներ, փորձ են անում տալ 21–րդ դարի ուսուցչի լիարժեք նկարագիրը: Վ. Ի. Անդրեևը ներկայացնում է երրորդ հազարամյակի ուսուցչի անձի մոդելը, որին հատուկ են՝

- կրթվածությունը՝ գիտության և արվեստի տարբեր բնագավառների վերաբերյալ գիտելիքներ, առաջադիմական հայացքներ, բարձր բարոյականություն, գեղագիտական ճաշակի և հոգևոր մշակույթի զարգացվածություն, ստեղծագործական ինքնազարգացում,
- հոգևոր զարգացած ներաշխարհը՝ բարոյական բարձր հատկանիշները, սերը դեպի երեխաները, մասնագիտական կոչման և կյանքի նպատակների գիտակցումը, միջանձնային հարաբերությունների ներդաշնակությունը, դիմացինի հոգին թափանցելու, անդրադարձ կատարելու ունակությունը,
- ստեղծագործական հատկանիշները՝ նորի և ինքնատիպի որոնումը, ստեղծագործական գործունեության դրդապատճառների առկայությունը, իր և սաների մեջ ստեղծագործական ունակությունների զարգացումը, կյանքում, մասնագիտական գործունեության մեջ և մշակույթի աշխարհում ազատության զգացումը և ինքնորոշման ունակությունը,
- ազատությունը՝ անձնական և մասնագիտական պատասխանատվության բարձր մակարդակը, հոգևոր և նյութական արժեքների աշխարհում կողմնորոշվածությունը, որոշումներ ընդունելու ունակությունը, կենսական դիրքորոշումը,
- մարդասիրությունը՝ գթասրտությունը, այլոց օգնելու ունակությունը, համբերատարությունը, դիմացինին լսելու և նրա կարծիքը հարգելու կարողությունը, աշակերտների, նրանց ծնողների, գործընկերների հետ

[1] А. В. Барабанщиков, Проблемы педагогической культуры преподавателей вузов (к вопросу о сущности педагогической культуры) // Советская педагогика, 1981, № 1, с. 73.

համագործակցելու ձգտումը,

- քաղաքացիական ակտիվությունը՝ շրջապատում և աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների գնահատումներում դատողությունների և վերլուծությունների օբյեկտիվությունը, հայրենասիրությունը, պարտքի և պատասխանատվության զգացումը, լավատեսությունը, իր և այլ ժողովուրդների պատմության ու մշակույթի իմացությունը,
- մրցունակությունը՝ ժամանակի ոգուն և մասնագիտական պահանջներին համապատասխանությունը, մանկավարժական առաջադիմական փորձի ուսումնասիրումը, այդ փորձի ստեղծագործաբար կիրառումը և զարգացումը, հետազոտական աշխատանք կատարելու ունակությունը, մանկավարժական նորագույն տեխնոլոգիաներին տիրապետումը, աշխատանքում բարձր արդյունքների հասնելու ձգտումը,
- հաղորդակցումը մշակույթին՝ սոցիալ–մշակութային իրավիճակների վերաբերյալ գիտելիքներ, ժողովրդական ծեսերի, սովորույթների և ավանդույթների իմացություն, արվեստի տեսակների վերաբերյալ գիտելիքներ և խոր հետաքրքրություն, սովորողների մեջ մշակույթի նկատմամբ հետաքրքրության ձևավորում[2] :

21–րդ դարի ուսուցչի՝ Վ. Ի. Անդրեևի կողմից առաջարկվող մոդելի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ այդպիսի ուսուցիչը պետք է տիրապետի մանկավարժական բարձր մշակույթի, լինի արժեհամակարգի կրող: Մանկավարժը, որը տիրապետում է մանկավարժական մշակույթի բարձր մակարդակի, ունի սեփական ոճը, մանկավարժական անհատական ձեռագիրը, ձգտում է կերտել մանկավարժի օրինակելի կերպար: Մանկավարժական մշակույթը համամարդկային մշակույթի մի մասն է, որը միավորում է մանկավարժական պատմամշակութային փորձը և կարգավորում է մանկավարժական փոխներգործության ոլորտը[3]:

---

[2] Андреев В. И., Педагогика творческого саморазвития. Инновационный курс. Кн. 1.–Казань: Изд– во Казанского университета, 1996, 568 с

[3] Железовская Г. И., Формирование педагогической интелектуальной культуры // Педагогика, 1995, № 2, с. 55.

Ուսուցչի անձի մանկավարժական ուղղվածությունից (անձնային որակներ, մեթոդամասնագիտական պատրաստվածություն, մանկավարժական վարպետություն, հոգեբանամանկավարժական խորագիտություն, վարք,հաղորդակցում և այլն) են կախված մանկավարժական գործունեության իրականացման բնույթն ու արդյունավետությունը: Այդ գործոններն են պայմանավորում ուսուցչի ինքնակատարելագործումը, որը նրա հետագա գործունեության մեջ արտահայտում է վարքային դրսևորումներ մշակույթում, մանկավարժական մտածողության մեջ, որն էլ հանգեցնում է ուսուցչի կողմից մանկավարժական մշակույթի հստակ ըմբռնմանը և յուրացմանը:

ԳԼՈՒԽ 1. ՈՒՍՈՒՑԻՉԸ՝ ՈՐՊԵՍ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԻՄՆԱՔԱՐ ԵՎ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՂ

Մարդկության կողմից ստեղծված նյութական և հոգևոր արժեքներն իրենց արտացոլումն են գտնում կրթության և դաստիարակության բովանդակության մեջ, մանկավարժի ստեղծագործական գործունեության միջոցներում: Մանկավարժական մշակույթը ընդհանուր մշակույթի մի մասն է, այդ մասին ժամանակին գրել են Յան Ամոս Կոմենսկին, Մ. Վ. Լոմոնոսովը, Կ. Դ. Ուշինսկին: Ըստ Վ. Ա. Սուխոմլինսկու՝ մանկավարժական մշակույթի մեջ պետք է առանձնացնել հետևյալ բաղադրիչները՝

- մարդասիրությունը, աշակերտի մտքին և սրտին անմիջականորեն դիմելը,
- իր առարկայի խոր իմացությունը, մանկավարժական գործընթացի բոլոր նրբություններին տիրապետելու ունակությունը, մանկավարժի հուզականությունը, զգայունակությունը, զգացմունքայնությունը,
- գործունեության տարբեր ձևերում երեխայի անհատական, տարիքային, հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրման մեթոդներիհարստությունն ու բազմազանությունը,
- մանկավարժի ստեղծագործական լաբորատորիայի առկայությունը,
- մանկավարժի գործունեության մեջ հոգեբանական ամուր հիմքը,
- ուսուցչի լեզվական մշակույթը, խոսքի մատչելիությունը, տրամաբանությունը, դիտողականությունը, ինքնավերահսկումը, արտահայտչամիջոցների հղկվածությունը[4]:

Մանկավարժի վարքը ուսուցչի անհատական մանկավարժական մշակույթի դրսևորումն է: Մանկավարժական մշակույթը այն հիմնաքարն է, որի վրա ձևավորվում է ուսուցչի մանկավարժական վարպետությունը:

Հասարակության որակը կախված է զարգացած, կրթված անհատներից, որոնք պետք է կազմեն հասարակության բովանդակային կորիզը, պետք է

[4] Сухумлинский В. А., Избранные педагогические сочинения в 3 т., т. 1, стр. 87

պատասխանատու լինեն ոչ միայն իրենց մասնավոր կյանքի ու կյանքի որակի համար՝ անհաղորդ ու անտարբեր մնալով հասարակությանը և ազգային խնդիրներին, այլև պետք է լինեն ակադեմիական հիմնարար գիտելիքներով զինված, մեր ժամանակների նորագույն ձեռքբերումներին քաջատեղյակ, ազգային գործոնն առաջ մղող, մարդկային բարձր արժանապատվությամբ և շրջահայեցությամբ օժտված առաջնորդներ, որոնք կհամալրեն հանրային կյանքի բոլոր բնագավառները:

Բարեփոխությունների անշրջելի ընթացքը ժամանակակից կրթական համակարգի առանձնահատկությունն է: Կրթական ոչ մի համակարգ չի կարող արդյունավետ գործել համաշխարհային կրթական գործընթացներից դուրս և այդ ամենից մեկուսացած: Գիտության, տեխնիկայի աննախադեպ առաջընթացը նոր մոտեցումներ ու պահանջներ է սահմանում նաև կրթամշակութային ոլորտի համար: Օրվա հրամայականն են դառնում ուսուցման նոր մեթոդների որոնման, կրթության բովանդակության նորացմանը միտված աշխատանքները: Անընդհատ փոփոխվող աշխատանքային միջավայրում, արագորեն վերակազմավորվող աշխատաշուկայում ավելի ու ավելի է կարևորվում որակյալ ուսուցման և որակյալ մասնագետների պահանջը, ինչը բնականորեն նպաստում է հանրակրթության դերի բարձրացմանը: Կրթությունը դառնում է հասարակության զարգացման խթանիչ ուժ՝ միաժամանակ ապահովելով նաև մարդկային համակեցության ներդաշնակ պայմաններ հասարակության բոլոր շերտերի համար: Հանրակրթության ոլորտում տեղի ունեցող համակարգային փոփոխությունները, որոնք պայմանավորված են համաշխարհային զարգացումներով, ենթադրում են ուսուցման ավանդական մոտեցումների վերանայում և վերաիմաստավորում, կրթության ոլորտում ազգային առանձնահատկությունների և միջազգային փորձի արդյունավետ համադրում: Այս 2 պայմաններում արդեն կարևոր խնդիր է դառնում պետական-ազգային մտածողություն ունեցող և կյանքի արագընթաց զարգացումներին հաղորդակից անհատի ձևավորումը, ինչի իրականացմանն էլ պետք է ուղղված լինի կրթական քաղաքականությունը: Բայց նախ և առաջ ուսուցիչն ինքը պետք է լինի այդպիսին:

ԳԼՈՒԽ 2. ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Դաստիարակությունը դաստիարակողի և դաստիարակվողների նպատակաուղղված, նպատակասլաց գործունեության ընթացքն է, որի շնորհիվ լուծվում են դաստիարակվողների անձի ձևավորման, զարգացման հիմնախնդիրները[5]: Կարելի է ասել՝ դաստիարակությունը նպատակասլաց ներգործությունների ամբողջական համակարգ է: Այն մանկավարժական գիտության շատ դժվարին բնագավառներից է, որն ունի մի շարք առանձնահատկություններ:

Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի[6]:

Հաշվի առնելով դաստիարակության առանձնահատկությունները, իսկ դրանք

[5] Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան, Մանկավարժություն, Երևան , 2005,էջ 275,
[6] Նույն տեղում, էջ 356

են.

-օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների հանդես գալը,

- միանգամից չերևացող կողմը,

- երկարատևությունը,

-կոմպլեքսային բնույթը,

-երկկողմանի բնույթը,

-ամբողջական բնույթը,

Կարող ենք նշել, որ սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման ընթացքում դրսևորվորվում է դաստիարակությունն իր բոլոր առանձնահատ-կություններով: Այսպիսի հետևություն մենք արել ենք դասապրոցեսի ընթացքում արժեքային համակարգի ձևավորման ժամանակ: Իբրև հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի՝ սեփական փորձով կարող ենք հավաստել, որ աշակերտի արժեհամակարգը պետք է ձևավորել ներդաշնակության սկզբունքով, որում իր ուրույն տեղը պետք է ունենա հնարավորինս սերտ հաղորդակցումը հայոց լեզվին և գրականությանը ՝ որպես մշակույթի մի տարատեսակի:

Անդրադառնանք նախ բարոյական դաստիարակությանը:

Բարոյական դաստիարակությունը հասարակական գիտակցության այն ոլորտներից է, որը կյանքի բոլոր բնագավառներում մարդկանց վարքը կարգավորելու գործառնություն է կատարում: Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում:

Եվ, իհարկե, արժեքային համակարգի ձևավորման գործում մեծ ենք համարում հայրենասիրական դաստիարակությունը: Առանց հայրենիքի, առանց հարազատ ժողովրդի մարդը լքյալ է, ինչպես Ռոբինզոնը: Ցիցերոնն ասում էր. «Մեզ համար

թանկ են երեխաները, մերձավոր ազգականները, բայց որևէ բանի նկատմամբ սիրո բոլոր պատկերացումները միավորված են մեկ բառի մեջ՝ հայրենիք»: Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: «Եթե դուք ունակ եք որոշելու երեխայի ունակությունն ու նրա ուժը, դուք պետք է գիտենաք, որ ամենամեծ ուրախությունը՝ դժվարությունների հաղթահարման, նպատակին հասնելու, գաղտնիքի բացահայտման ուրախությունը հաղթանակի բերկրանքն է ու ինքնուրույն դառնալու, տիրելու ու տիրապետելու երջանկությունը» :

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: «Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ

արտահայտում են նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում են անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք դեռահասի անձի նկատմամբ» [6, 65]: Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

ԳԼՈՒԽ 3. «ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ԴՊՐՈՑՈՒՄ՝ ՈՐՊԵՍ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑ

Անհեղինակ, ժողովրդական ստեղծագործություններում՝ առասպելներում, էպոսում, հեքիաթներում և ավանդազրույցներում, ինքնաբուխ ձևով դրսևորվում են տվյալ ազգի ինքնության, աշխարհատեսության, հոգեկերտվածքի և վարքագծի գծերը, երկարատև հարմարումների հետևանքով ձևավորված արժեքային մոտեցումներն ու դիրքորոշումները: Քանի որ առասպելները, էպիկական պատումները, լեգենդներն ու ավանդազրույցները գալիս են դարերի խորքերից ու իրենց վրա կրում են այդ դարերի կենսակերպի ու մտածելակերպի հետքերը, դրանք լավագույնս արտացոլում են Աստծո, բնության, հասարակության, մարդու, կյանքի, ազգի, հայրենիքի, պետության և այլ արժեքների ու երևույթների վերաբերյալ տվյալ ժողովրդի պատկերացումները: Այլ խոսքով՝ էպիկական կերպարների, հատկապես հերոս-դյուցազունների սխրագործությունների, վարք ու բարքի վերլուծությունն անսպառ նյութ կարող է տալ ոչ միայն նրանց, այլև տվյալ ազգի մտածելակերպն ու գործելակերպը, բարոյահոգեբանական յուրահատկությունները որոշ իմաստով հասկանալու ու գնահատելու համար:

Ամեն ժողովրդի էպոս ամենակարևորն է ստեղծող ժողովրդի բանահյուսության գանձարանում: Այդպիսին է նաև հայ ժողովրդական հերոսական էպոս «Սասունցի Դավիթը», որին ծանոթանում են տարբեր դասարաններում: Որպես երկար տարիներ դպրոցում հայոց լեզու և հայ գրականություն դասավանդող ուսուցչուհի՝ հավաստում ենք, որ հայ երեխան սիրով է յուրացնում մեր էպոսի խորունկ գաղափարներն ու հայրենասիրական ոգին: Ամեն ինչ կախված է դասավանդող ուսուցչի վարպետությունից: Էպոսի ուսուցումը սկսվում է ցածր դասարաններից, և դա տրամաբանական է: Մեծ մտածող, մանկավարժ և գրող Լևոն Շանթը, որը երկար տարիներ զբաղվել է մանկավարժական աշխատանքով, ապագա և գործող ուսուցիչներին հղել է 74 բազմաթիվ օգտակար պատգամներ: Ահա թե ինչ է ասում նա:

«Հաջորդականության ընտրությունը» հոդվածում. «Ո՛չ մեկ կարողություն, ոչ մեկ ուսում ու գիտություն ձեռք չի բերվիր մեկ անգամեն, մեկ ջանքով, այլ երկար-երկար ճիգերով, քիչքիչ, հետզհետե և կտոր-կտոր, և երբեք ո՛չ մեկ կարողություն, ո՛չ մեկ գիտություն վերջ ու գագաթ չունի իր զարգացման. միշտ կարելի է ավելի ու ավելի

կատարելագործել. ինչ որ սովորաբար ավարտել, գագաթնակետ կամ կատարելություն կնկատենք՝ հարաբերական արտահայտություններ են միայն»։

Էպոսը ամեն հայի պետք է ուղեկցի նրա կյանքի բոլոր տարիքներում, որովհետև էպոսի ասելիքը ամեն մի ժողովրդի հավաքական մտածողության, դարավոր կենսափորձի հիման վրա է առաջացել և ասվել է դարերի համար. այն ուղեցույց է։ Այս ճշմարտությունը գիտակցել է հենց էպոսի առաջին գրառողը՝ Գարեգին Սրվանձտյանցը, որի կատարածը հիմք դարձավ հայ էպոսագիտության զարգացման և նրա մշակումներին համար։ Զարմանալի չէ, որ Գ. Սրվանձտյանցի գրառումից շատ չանցած հայ գրականության մեջ այդ գրառման հիման վրա հանդես եկան էպոսի երկու գրական մշակումներ։ Առաջինն այն իրականացրեց Սեդրակ Մանդինյանը (1844-1915), որը մանկավարժ էր, դերասան, գրական ու թատերական գործիչ։ Նա երկար տարիներ հայ գրականություն է դասավանդել դպրոցներում և միանգամից կարևորել է էպոսի՝ ազգային ոգին արթուն պահելու հատկանիշը ու իրականացրել նրա մշակումը՝ «Ազգային դյուցազնական աշխարհ» խորագրով։

«Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք բնագիրն անցնում են IX դասարանում։ Սա փաստորեն մեր ազգային էպոսի հետ ծանոթանալու հիմնական յուրացման առաջին ու կարևոր քայլն է, որը ներկայացնում է հայ էպոսագիտության սկզբնավորումը, նրա անցած ճանապարհը, զանազան պատումների գրառումները և դրանց հիման վրա ակադեմիկոս Օրբելու խմբագրությամբ 1939 թվականին համահավաք բնագրի ստեղծումն ու հրապարակումը։ Բնականաբար խոսք է ասվում էպոսի պատմական հիմքի, գաղափարական հարստության, կերպարների համակարգի, բառապաշարիշերտերի ու արվեստի մասին։

Ժողովրդական վեպը, դյուցազնավեպը կամ էպոսը մարմնավորում է տվյալ ժողովրդին առանձնահատուկ, նրան բնորոշ հատկությունները։ Ժողովրդի ապրումները, նրա ձգտումներն արտահայտող նման ստեղծագործությունները մշակվում են երկար ժամանակ, դարերի ընթացքում, բայց վերջնական ձևավորում են ստանում ժողովրդի ինքության, ինքնագիտակցության բարձրացման որոշակի աստիճանում։

«Սասունցի Դավիթ»–ը հայ ժողովրդի ողջ պատմության ընդհանրացումն է։ Հայ ժողովուրդը անկախ ու ազատ ապրելու անպարտելի ուժը, մարդկային իր խոհերն ու

ձգտումները մարմնավորել է ժողովրդական էպոսում, մասնավորապես Դավիթի կերպարի մեջ։ Հարկ է նշել, որ բոլոր ժողովուրդների էպոսներն իրար հետ ունեն շատ ընդհանուր գծեր։ Նրանցում տվյալ ժողովրդի շահերն արտահայտող հերոսները չար ուժերի դեմ պայքարում մշտապես հաղթանակ են տանում։ Հերոսները ծնունդ են առնում բնության երևույթներից՝ աղբյուրի ջրից, խնձորից, արևի լույսից և այլն։ Դյուցազուն մանուկներն աճում են ոչ թե տարիների կամ ամիսների, այլ ժամերի ընթացքում։ Նրանք անասելի մեծ ուժի տեր են և սխրանքներ են կատարում շատ երիտասարդ տարիքում, պատանեկության շրջանում։ Մեծ ուշադրություն է դարձվում դյուցազունների զենքին ու նժույգին։ Նժույգը հանդես է գալիս որպես իր տիրոջ կախարդական օգնականը։ Անհրաժեշտության պարագայում քնից արթնացնում է տիրոջը, զգուշացնում վերահաս վտանգի մասին։ Էպոսները ավարտվում են արդարության, բարության հաղթանակով :

Ընդհանուր այդ երևույթները հատուկ են նաև հայկական էպոսին։ Սանասարը և Բաղդասարը ծնվում են աղբյուրի զուլալ ջրից։ Դավիթն ուժ ու կորով է ստանում այդ նույն աղբյուրի ջրից։ Հայկական էպոսում առաջին հերթին արժևորվում է բարիքներ ստեղծող արդար աշխատանքը։ Աշխատանքը՝ որպես կյանքի կենսունակության աղբյուր, առկա է դյուցազնավեպի բոլոր ճյուղերում՝ Սանասարի և Բաղդասարի կողմից Սասնա բերդի կառուցումը, Դավթի կողմից հոր կառուցած Մարութա վանքի վերականգնումը, Փոքր Միհրի կամրջաշինությունը։ Դավթին տեսնում ենք գութանի ու գութանավորների հետ։ Հյուրասիրվելով գութանավորների մոտ՝ Դավիթը սպառում է նրանց մեկ շաբաթվա սննդի պաշարը, որի պատճառով ստեղծվում է դժվարին կացություն։ Դավիթը նրանց ազատում է հոգսից՝ վեց օրվա վարը մի քանի ժամում կատարելով[7]։

Մարդու գոյության կարևոր նախապայմաններից մեկը հացն է, որը ստացվում է երկրագործի ծանր աշխատանքի միջոցով։ Աշխատանքը, (գութանը) ներկայանում է իբրև գոյության հիմք, իբրև առատության աղբյուր, այն ընդհանուր հարգանքի ու մեծարման է արժանանում։ Պատահական չէ, որ հնուց եկող ավանդությամբ հայ ժողովրդի բանահյուսության մեջ աշխատանքին ձոնված երգերի մեծ մասը կազմել են գութանին, վար ու ցանքին, բերքահավաքին նվիրված երգերը։ Դյուցազնավեպում

[7] Ասաց,– դուք էստեղ քիչ մի նստեք, ես կելնեմ, էն վեց ավուր գութան Մեկ ժամվա մեջ կանեմ։

ժողովուրդը կյանքի իմաստը տեսնում է խաղաղ աշխատանքի մեջ։ Ատելությամբ է վերաբերվում թալանով, կողոպուտով ապրողների նկատմամբ։ Արդար աշխատանքով, սեփական քրտինքով հաց վաստակելը ներկայանում է որպես սկզբունք, որպես միակ ընդունելի միջոց։

Հայկական էպոսում լայն տեղ է տրվում հնից ժառանգած և հայ ժողովրդի համար ավանդություն դարձած կյանքի երևույթներին, դարերի ընթացքում ձևավորված, նրան հարազատ դարձած, նրա կենցաղի մեջ մտած, ազգային սովորություն դարձած մարդկային հատկանիշներին։ Դրանցից են ընտանիքի մեծի նկատմամբ խոր հարգանք ունենալը, նրան ենթարկվելը, անչափահաս ժառանգին հորեղբոր, մորեղբոր կողմից խնամելը, ապա նրա հովանավոր, խորհրդատու դառնալը, փորձով իմաստնացած մեծահասակ մարդկանց խորհուրդներին լսելը։ Դավիթը քանիցս ականջալուր է լինում կորեկի արտի տեր պառավ հայ կնոջ խորհուրդներին և մշտապես հաջողության է հասնում։ Երբ նա անխնա կոտորում էր Մըսրա Մելիքի զորքին, յոթ տղաների հետ կռվի դաշտ բերված գլխաբաց արաբ ծերունին խնդրանքով դիմում է Դավթին և դադարեցնել է տալիս կոտորածը։

«Սասունցի Դավիթ» էպոսի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ նրա հերոսները թշնամու դեմ մենակ են հանդես գալիս։ Մյուս ժողովուրդների էպոսների հերոսները, որպես կանոն, զորքով են կռվի մեջ մտնում։ Հայկական դյուցազնավեպում դավաճանություն չենք տեսնում։[8] Պատմական անցյալում Հայաստանում առանձին նախարարների, իշխանների կողմից նման դեպքեր եղել են, բայց քանի որ դավաճանությունն ընդհանուր առմամբ անհարիր է հայ ժողովրդի ոգուն՝ էպոսում տեղ չի գտել։ Տարբեր ժողովուրդների էպոսներում կինը հաճախ դավաճանի կամ դատապարտելի արարքների հեղինակ է հանդես գալիս։ «Սասունցի Դավիթ» էպոսում, ընդհակառակը, կինը երևան է գալիս անձնազոհ մարդասիրությամբ։ Թագավորի դուստր Ծովինարը, տեսնելով, որ խալիֆի հարսնացու դառնալուն համաձայնություն չտալու դեպքում երկիրն ավերվելու է, ժողովուրդը՝ կոտորվելու, գնում է ինքնազոհության։ Հայ կինը էպոսի հերոսների նման ու նրանց կողքին հայրենասիրության, ժողովրդավարության վառ օրինակ է տալիս։ Հայկական էպոսի հերոսները դուրս են եկել ժողովրդի միջից և մշտապես կապված են մնացել նրա

[8] Ղանալանյան Ա. «Սասունցի Դավիթ», Հայկական ժողովրդական էպոս, , Երևան, 1939, 383 էջ։

հետ։ Նրանց բարքերը, սովորությունները հասարակ մարդկանց, ժողովրդի կենցաղն են։ Ժողովրդի հետ սերտորեն առնչված, պարզ ու միամիտ, բայց մշտապես արդարամիտ լինելով՝ միաժամանակ դրսևորում են ազնվականին հատուկ արժանապատիվ կեցվածք։ Դավիթը համաձայնում է, որ հարվածելու իրավունքից առաջինը օգտվի Մսրա Մելիքը, երեք զարկից հետո, երբ հերթը հասնում է Դավթին, կրծքով իրեն սնած կնոջ խնդրանքով առաջին զարկը նվիրում է նրան, երկրորդ զարկը՝ Մելիքի քրոջը, որի ծնկներին էր մեծացել ինքը։ Օգտվում է միայն վերջին զարկի իրավունքից։ Հայ հերոսները արդարամիտ ու ազնիվ են իրենց բոլոր արարքներում։ Դավիթը Մսրա Մելիքի զորքի վրա հանկարծակի չի հարձակվում, զգուշացնում է, որ նրանք պատրաստվեն կռվի։

Ժողովրդական վիպերգությունները, ինչպես նշում է Հ. Թումանյանը, որքան էլ ազգային լինեն, համամարդկային շատ գծեր ունեն։ Հայկական էպոսում բավականաչափ ցայտուն է արտահայտվել այդ հանգամանքը։ Ազատության գաղափարը էպոսում սահման չի ճանաչում, չի պարփակվում իր ժողովրդի շրջանակներով, այլ հնչում է որպես համընդհանուր գաղափար, դառնում սրբություն։ Ահա դրա մեկ օրինակը. Դավիթը քանդում է հոր որսատեղի պարիսպները և ազատություն է տալիս անգամ որսի կենդանիներին։

Ժողովուրդների համերաշխության գաղափարը կարմիր թելի նման անցնում է ամբողջ դյուցազներգության միջով։ Մըսրա Մելիքի սպանությունից հետո Դավիթը նրա զորքին որևէ պահանջ չի առաջադրում, ոչ էլ հալածում է, այլ խաղաղ կյանքով ապրելու հորդոր է անում։ Ահա սա է հայոց դյուցազնավեպի, ասել է թե՝ հայ ժողովրդի իդեալը։ Էպոսում չկա կրոնական անհանդուրժողականություն, կռիվը գնում է այլ դավանանք ունեցող օտարերկրացու դեմ, սակայն թշնամու դեմ պայքարը գնում է ոչ թե դավանանքի, այլ նրա հարկային ծանր բեռը թոթափելու, ազատ ապրելու համար։ Կրոնական տարբեր դավանանքին որևէ նշանակություն չի տրվում։

Մեր էպոսն իրոք յուրահատուկ է և այն բացառիկ նմուշներից, որի միջոցով կարելի է ձևավորել արժեհամակարգ՝ սկսած տարրական դասարաններից։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Ուսուցչի համար կարևոր է իր պրակտիկ գործունեության վերլուծության, կատարելագործման, ինքնազարգացման, շարունակական կրթության համար գիտամանկավարժական տեսական գիտելիքներից օգտվելու կարողությունը:

2. Փորձը ցույց է տալիս,որ մանկավարժական շատ հիմնախնդիրներ հաջողությամբ լուծելու համար անհրաժեշտ է դրսևորել ստեղծագործական մտածողություն

3.Դպրոցը պետք է օգտագործի իր դաստիարակչական ներուժը՝ սովորողների մեջ սերմանելով բարություն, ազնվություն, ճշմարտասիրություն, հարգանք մարդու նկատմամբ և այլն:

4. Դպրոցականների մեջ արժեքային համակարգի ձևավորումը տեղի է ունենում բոլոր առարկաների դասավանդման ընթացքում,առավելապես՝ գրականության:

5.Հայրենասիրական ստեղծագործությունների ուսումնասիրումը անհրաժեշտ գործընթաց է հայ դպրոցականի համար: Դրանց միջոցով նա ծանոթանում է ազգի մշակույթին, նրա անցած պատմական ուղուն, հայտնի հերոսներին: Ստեղծագործու-թյունները ուղղակիորեն ազդում են սովորողների ներաշխարհի, հոգեբանության վրա, հարստացնում ու զարգացնում են նրանց արժեքային համակարգը, սովորեցնում սիրել հայրենիքը և անհրաժեշտության պահին պայքարել նրա ազատության և անկախության համար:

6.Մեր իրականության մաս կազմող արժեքները՝ հոգևոր և նյութական, ամուր հենարաններ են, որոնք սովորողին, որ վաղվա քաղաքացին է, օգնելու են պայքարելու կյանքի հարուցած խոչընդոտների դեմ, դիմակայելու ստեղծված փորձություններին, հաղթահարելու անելանելի թվացող դժվարությունները:

7.Էպոսի ուսումնասիրումը բացառիկ նշանակություն ունի սովորողներին հոգևոր և բարոյական, ազգային և համամարդկային արժեքներով դաստիարակելու գործում:

8.Արժեքային համակարգի ձևավորման գործում բացառիկ է բարոյական դաստիարակության դերը:

9. Սեփական գիտելիքների հարստացումը, կարողությունների և հմտությունների դրսևորումը և գործընկերների հետ համագործակցությունը բացառիկ դեր ունեն սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման ժամանակ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.«Ազգային դյուցազնական աշխարհ» (Սասունցի Դավիթ կամ Միհերի դուռ), հորինեց Ս. Մանդինյան, Թիֆլիս, 1881,

2.Ա.Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան, Մանկավարժություն, Երևան , 2005

3.Ն.Տողանյան, Թ.Թովմասյան, Լ. Գրիգորյան, Մեթոդական ձեռնարկ ուսուցչի համար, Երևան, 2012,

4.Թումանյան Հովհ., ԵԼԺ, հ. 7, Երևան, 1995,

5.Ներսիսյան Վ., Մնացականյան Լ., Հայ գրականություն, 10, Երևան, 2009, Շանթ Լ., Երկերի ժողովածու հինգ հատորով, հ.5, Երևան, 2012

6.Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցև Գ. Ա., Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987թ

7.Մուդրիկ Ա. Վ., Դպրոցականի անձը և նրա դաստիարակությունը կոլեկտիվում, Երևան, 1986թ.

8.«Սասունցի Դավիթ», Հայկական ժողովրդական էպոս,

9.Скаткин М. Н. , Проблемы современной дидактики, 2-е изд.- Москва, 1984

10.Бабанский Ю. К., Оптимизация уч.- воспитат. процесса. метод. основы, М.,1982,

11.Барабанщиков А Б, Проблемы педагогической культуры преподавателей вузов (к вопросу о сущности педагогической культуры) // Советская педагогика, 1981, № 1, .

12.Железовская Г. И., Формирование педагогической интелектуальной культуры // Педагогика, 1995, № 2,

13.Ушинский К. Д., Педагогика, М., 2019